ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 16 >> << մարտի >> 2020թ. N ԱՄ/82-2020

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԲԵՐՈՎԻ (COVID-19), ԲԵՐՈՎԻՑ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԴԵՊՔԵՐՈՎ (COVID-19) (ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ԴԵՊՔԵՐ) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2020 թվականի մարտի 12-ի N ՍՊ/15.2/7053-2020 գրությունը՝ կորոնավիրուսային վարակի կանխարգելման միջոցառումներով պայմանավորված.

*որոշում եմ՝*

1. Հաստատել կորոնավիրուսային վարակի բերովի (COVID-19), բերովիից երկրորդային (COVID-19) (կլաստերային դեպքեր) դեպքերով պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլանները՝ համաձայն N 1, 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Հ. ՄԱԹևՈՍՅԱՆ*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 16.03.2020 18:07:43 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

Հաստատում եմ

ՀՀ Արմավիրի մարզպետ

Համբարձում Մաթևոսյան

# ՊԼԱՆ

## Արմավիրի մարզի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բերովիից երկրորդային դեպքերով (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման

| Հ | Միջոցառում | Ենթամիջոցառում | Պատասխանատու Համակատարող | Բյուջե | Կատարման ժամկետը | 1. Նշումներ՝ |
|---|---|---|---|---|---|---|
| I. Արտակարգ իրավիճաներին արձագանքման մեխանիզմներ | | | | | | |
| 1. | Սահմանված ժամկետներում և ըստ անհրաժեշտության իրականացնել համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր | 1) Նիստերն արձանագրել՝ նախատեսելով համապատասխան միջոցառումներ և նշելով պատասխանատուներին | ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ | Չի պահանջվում | Մշտապես | |
| 2. | Իրականացնել համաճարակային կոնկրետ իրավիճակում բոլոր վտանգների և ռիսկերի գնահատում, դրանց մասին տեղեկատվության փոխանակում ազգային և համապատասխան շահագրգիռ կառույցների հետ | 1) Գնահատել կորոնավիրուսի հետ կապված բոլոր վտանգները և ռիսկերը<br>2) Գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը տրամադրել ազգային և համապատասխան շահագրգիռ կառույցներին | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիր մասնաճյուղ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Չի պահանջվում | Պարբերաբար | |
| 3. | Կորոնավիրուսի հետ կապված՝ հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմների գնահատման համար, պլանավորել, կազմակերպել և իրականացնել վարժանքներ | 1) Մշակել վարժանքների սցենարներ<br>2) Կազմակերպել վարժանք՝ բոլոր շահագրգիռների մասնակցությամբ<br>3) Վարժանքների արդյունքում կատարել ուղղիչ գործողություններ արտակարգ իրավիճակների արձագանքման տարբեր խումբ միջոցառումներում | ՀՀ Արմավիրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Արտակարգ իրավիճակների Նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահական և աշխատանքի տեսչական | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Ըստ պլանի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մարմնի Հարավային տարածքային կենտրոն, Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոն | | | |
| 4. | Ձևավորել պահուստային պաշարներ և ապահովել մարդկային ռեսուրսներ՝ կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակին արձագանքման համար | 1) Գնահատել կլաստերային դեպքերի և բռնկումների ժամանակ կանխատեսվող հիվանդների և մահերի թիվը<br>2) Սպասվող հիվանդության և մահվան դեպքերի թվից ելնելով՝ հաշվարկել անհրաժեշտ պահուստային պաշարները՝ դեղորայքի, ախտահանիչների, անհատական պաշտպանության միջոցների, տրանսպորտի<br>3) Գնահատել կորոնավիրուսային հիվանդության կլաստերային դեպքերի և բռնկումների ժամանակ անհրաժեշտ մարդկային ռեսուրսները<br>4) Ապահովել առանցքային մասնագետների փոխարինելիությունը | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն, Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոն | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Մշտապես | |
| **II.** | **Ռիսկերի հաղորդակցում և հանրության ներգրավվածություն** | | | | | |
| 5. | Ըստ տվյալ պլանի՝ միջոցառումների համապատասխան բյուջետային միջոցների հատկացում | 1) Գնահատել սույն պլանով նախատեսված միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները<br>2) Վեր հանել ֆինանսավորման հետ կապված խնդիրները և ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ՝ սահմանելով բյուջետային միջոցների հատկացման նոր աղբյուրներ | ՀՀ Արմավիրի մարզպետարան | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Ըստ անհրաժեշտության | |
| 6. | Համակարգել ռիսկերի հաղորդակցման և համայնքների ներգրավվածության | 1) Համակարգել համայնքային մասնագիտական թիմերի աշխատանքը՝ | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ | Պետական բյուջե և օրենքով | Մշտապես | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մասնագիտական թիմերի աշխատանքը | իրականացնելով ռիսկի հաղորդակցում և համայնքների ներգրավվածություն<br>2) Ներկայացնել թիմերի աշխատանքի պարբերական հաշվետվություններ<br>3) Վեր հանել մասնագիտական թիմերի աշխատանքի ընթացքում առկա խոչընդոտները և խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ միջգերատեսչական հանձնաժողովին | (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն | չարգելված այլ աղբյուրներ | | |
| 7. | Ակտիվորեն հաղորդակցել կորոնավիրուսային հիվանդության առնչությամբ ռիսկի ենթակա հանրության հետ՝ ռիսկի հաղորդակցման և բնակչության ներգրավման միջոցով | 1) Ակտիվացնել ռիսկերի հաղորդակցման և համայնքների ներգրավվածության հարցերով գործողությունների պլանները<br>2) Ըստ պլանի իրականացնել գույքագրված ռիսկերի վերաբերյալ բնակչության հետ հաղորդակցում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Մշտապես | |
| 1. | Մշակել և ներդնել սոցիալական մոբիլիզացման պլան | 1) Որոշել բնակչության՝ հաղորդակցման ենթակա խմբերը<br>2) Մշակել հաղորդակցման միջոցառումները<br>3) Որոշել հաղորդակցման ձևերը<br>4) Ստեղծել սոցիալական մոբիլիզացման աշխատանքները համակարգող թիմ | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահության և | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | | | |
| 2. | Որոշել բնակչության հետ հաղորդակցումն ապահովող խոսնակներին, ՁԼՄ-երը, սահմանել դրանց գործառույթները | 1) Սահմանել բոլոր մակարդակներում բնակչության հետ հաղորդակցումն ապահովող խոսնակներին<br>2) Որոշել առանցքային ՁԼՄ-երը՝ կորոնավիրուսային հիվանդության առնչությամբ բնակչության հետ հաղորդակցումն ապահովելու համար<br>3) Սահմանել նանց գործառույթները | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Պլանը գործադրելուց հետո 20 օրվա ընթացքում | |
| 3. | Ստեղծել ասեկոսեների կառավարման համակարգ | 1. Որոշել ասեկոսեների հնարավոր աղբյուրները<br>2. Մշակել մեխանիզմներ դրանց կառավարման համար | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Պլանը գործադրելուց հետո 20 օրվա ընթացքում | |
| III. | Դեպքերի հայտնաբերում, շփվածների հետագծում և կառավարում | | | | | |
| 4. | ԱՀԿ մոտեցումներին համապատասխան՝ վերանայել և | 1) ԱՀԿ կորոնավիրուսային հիվանդության դեպքի | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ | Պետական բյուջե և | Ըստ անհրաժեշտությ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ներդնել կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ սահմանումը | ստանդարտ սահմանմանը համապատասխան վերանայել գործող դեպքի ստանդարտ սահմանումը<br>2) Վերանայված դեպքի ստանդարտ սահմանման մասին իրազեկել բուժանձնակազմին<br>3) Իրականացնել սեմինար-դասընթաց դեպքի ստանդարտ սահմանմանը ծանոթացնելու նպատակով | համայնքներ (համաձայնությամբ), Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | օրենքով չարգելված այլ աղբյուրներ | ան | |
| 5. | Վարել կորոնավիրուսային հիվանդության կլինիկական տվյալների բազա՝ Հայաստանում արձանագրված դեպքերի կլինիկական առանձնահատկությունները հաշվառելու և վերլուծելու նպատակով | 1) Գրանցել կորոնավիրուսային վարակի բոլոր դեպքերի կլինիկական դրսևորումները<br>2) Շարունակականորեն իրականացնել պացիենտների կողմից ընդունած հակավիրուսային կամ այլ չլիցենզավորված կամ կլինիկական փորձարկումներ անցնող դեղորայքի կիրառման դրսևորումների մշտադիտարկում | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մշտապես | |
| 6. | Արձանագրված դեպքերի հետ շփված անձանց տեսակավորման, կարանտինի կազմակերպման հսկողության գործընթացը կանոնակարգող իրավական ակտի/երի մշակում | 1) Գույքագրել կորոնավիրուսային հիվանդության դեպքերի հետ շփված անձանց տեսակավորման, կարանտինի կազմակերպման հսկողության վերաբերյալ գործող իրավական ակտերի պահանջները<br>2) Դրանք համադրել ԱՀԿ՝ համաճարակային գործընթացի զարգացման տվյալ փուլին համապատասխան մոտեցումների հետ | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում | |
| **IV.** | **Համաճարակաբանական դիտարկում** | | | | | |
| 7. | Կորոնավիրուսային հիվանդության համաճարակաբանական դիտարկման համակարգը ինտեգրել | 1) Ծանր սուր շնչառական վարակի դեպքերը հետազոտել նաև Կորոնավիրուսային | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում | Պետական բյուջե և օրենքով | Մշտապես | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գործող համաճարակաբանական դիտարկման համակարգում (գրիպանման հիվանդություն, սուր շնչական վարակ և ծանր սուր շնչական վարակ) | հիվանդության նկատմամբ | իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | չարգելված այլ միջոցներ | | |
| **V. Հանրային առողջապահական միջոցառումներ** | | | | | | |
| 8. | Բնակչության շրջանում իրականացնել բժշկահիգիենիկ կրթում՝ ձեռքերի հիգիենայի, հազալու և փռշտալու վարվելակարգի, սոցիալական տարածության պահպանման վերաբերյալ | 1) Մշակել բժշկահիգիենիկ կրթության մեխանիզմները, որոշել լսարանը, ուղերձները<br>2) Մշակել և գործադրել բժշկահիգիենիկ կրթության ծրագիր | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Չի պահանջվում | Մշտապես | |
| **VI. Լաբորատոր թեստավորում** | | | | | | |
| 9. | Գնահատել նմուշների հավաքման և վարման համապատասխանությունը գործող ընթացակարգերին | 1) Մշակել գնահատման գործիք<br>2) Ըստ գործիքի իրականացնել գործող ընթացակարգերին նմուշների հավաքման և վարման համապատասխանության գնահատում | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Չի պահանջվում | Մշտապես | |
| 10. | Կորոնավիրուսի նկատմամբ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում ներդնել այս վիրուսի հետ աշխատելու կենսանվտանգության ԳՍԸ | 1) Մշակել և ներդնել կորոնավիրուսի հետ աշխատելու կենսանվտանգության ԳՍԸ՝ ԱՀԿ մոտեցումներին համապատասխան | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, Առողջապահության և | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո 15 օրվա ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքի տեսչական մարմին | | | |
| 11. | Մշակել և ներդնել լաբորատոր նմուշառման և հետազոտման ԳՍԸ-ներ՝ ըստ կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ սահմանման | 1) Մշակել կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ նմուշառման և նմուշների հետազոտության ԳՍԸ-ներ<br>2) Իրականացնել սեմինարներ լաբորատոր անձնակազմի և նմուշառողների շրջանում ԳՍԸ-ի ներդրման նպատակով | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում | |
| **VII.** | **Դեպքի վարում** | | | | | |
| 12. | Նախապատրաստել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների մեծ հոսքի համար բժշկական օգնության և սպասարկման (ռեֆերալ) կազմակերպություններ | 1) Գնահատել հիվանդների հնարավոր հոսքերը<br>2) Ընտրել համապատասխան բժշկական կազմակերպություններ<br>3) ԱՀԿ մոտեցումների հիման վրա մշակել գնահատման գործիք և գնահատել կոնկրետ բժշկական կազմակերպություններն ընտրելու նպատակահարմարությունը՝ փաստացի արդյունքների հիման վրա<br>4) Իրականացնել ընտրված կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովումը<br>5) Բժշկական կազմակերպություններն ապահովել անհրաժեշտ մարդկային ներուժով | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Պլանը գործադրելուց հետո մեկ ամսվա ընթացքում | |
| 13. | Մշակել և ներդնել հիվանդների տեսակավորման ընթացակարգ | 1) Ուսումնասիրել միջազգային փորձը<br>2) Մշակել և ներդնել հիվանդների տեսակավորման ընթացակարգ | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենտրոն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | | | |
| 14. | Ակտիվացնել բժշկական կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանները | 1) Քննության առնել բժշկական կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլաններով նախատեսված միջոցառումները<br>2) Անհրաժեշտության դեպքում դրանք վերանայել և լրամշակել | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում | |
| 15. | | 1) Գույքագրել ԱՀԿ մոտեցումները՝ կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների բուժման վերաբերյալ<br>2) Անհրաժեշտության դեպքում՝ վերանայել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդների բուժման ուղեցույցը և գործելակարգը | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Պլանը գործադրելուց հետո 45 օրվա ընթացքում | |
| **VIII.** | **Վարակի հսկողություն** | | | | | |
| 16. | Բժշկական կազմակերպություններում պլանավորել և իրականացնել վարակի հսկողության ռիսկերի գնահատում, որոշել հիվանդների մեծ հոսքերի ժամանակ վարակի հսկողության կարողությունները | 1) Շարունակաբար համագործակցել բժշկական կազմակերպությունների վարակի հսկողության պատասխանատուների հետ՝ ապահովելով հետադարձ կապը<br>2) Պլանավորել և իրականացնել վարակի հսկողության ռիսկերի գնահատում՝ ԱՀԿ մոտեցումներին համապատասխան գործիքով,<br>3) Որոշել հիվանդների մեծ հոսքերի ժամանակ վարակի հսկողության կարողությունները | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ Արմավիր մասնաճյուղ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Ըստ պլանի | |
| 17. | Իրականացնել վարակի հսկողության | 1) Մշակել կրթական ծրագիր | ՀՀ Արմավիրի | Պետական | Մշտապես | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պատասխանատուների և կլինիկական մենեջմենթի մասնագետների կրթումը կորոնավիրուսային հիվանդության հետ կապված վարակի հսկողության հարցերով | 2) Գնահատել կրթական կարիքները<br>3) Որոշել դասավանդողներին<br>4) Իրականացնել կրթում | մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | | |
| 18. | Ապահովել թեթև դեպքերի՝ տանը բուժման կազմակերպումը | 1. Ապահովել դեպքերի հայտնաբերումը<br>2. Ապահովել հիվանդների հետ շփված անձանց հսկողությունը<br>3. Մշակել ԳՍԸ՝ տանը բուժվող հիվանդության թեթև ձևերի համար | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, ՀՎԿԱԿ, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Մշտապես | |
| **IX. Սոցիալական արձագանքում** | | | | | | |
| 19. | Ուղևորություններ և առևտուր կազմակերպելիս և իրականացնելիս՝ առաջնորդվել Միջազգային առողջապահական կանոնների պահանջներով | 1) Կազմակերպել պարբերական քննարկումներ զբոսաշրջային և առևտրային ոլորտների հետ | ՀՀ Արմավիրի մարզպետարան, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիր մասնաճյուղ, ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի Հարավային տարածքային կենտրոն | Չի պահանջվում | Մշտապես | |

Հաստատում եմ

ՀՀ Արմավիրի մարզպետ

Համբարձում Մաթևոսյան

# ՊԼԱՆ

## Արմավիրի մարզի մակարդակով կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բերովի դեպքերով պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման

| Հ | Միջոցառում | Ենթամիջոցառում | Պատասխանատու Համակատարող | Բյուջե | Կատարման ժամկետը | Նշում |
|---|---|---|---|---|---|---|
| | **I. Համակարգում** | | | | | |
| 1. | Ձևավորել համակարգող միջգերատեսչական հանձնաժողով | 1. Որոշել հանձնաժողովի կազմը<br>2. Ընդունել Արմավիրի մարզպետի որոշում | Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ | Չի պահանջվում | Մինչև 13.03.2020թ | |
| | **II. Ռիսկերի հաղորդակցում և համայնքների ներգրավվածություն** | | | | | |
| 2. | Ռիսկի գործոնով պայմանավորված՝ ձևավորել մասնագիտացված թիմեր և ապահովել դրանց պատրաստվածությունը | 1. Մարզային և համայնքային մակարդակով ձևավորել մասնագիտական թիմեր<br>2. Նշված թիմերի անդամների համար պատրաստել իրազեկման ուղեցույցներ, կազմակերպել սեմինարներ<br>3. Թիմերին ապահովել անհրաժեշտ արտահագուստով և այլ պաշտպանիչ միջոցներով<br>4. Մշակել թիմերի աշխատանքի հաշվետվության ձևեր | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի համայնքներ (համաձայնությամբ) | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Մինչև 14.03.2020թ. | |
| 3. | Ռիսկերի հաղորդակցման և համայնքների ներգրավվածության հարցերով մշակել | 1. Գույքագրել բոլոր վտանգները<br>2. Մշակել պլան | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի համայնքներ (համաձայնությամբ) | Չի պահանջվում | Մինչև 14.03.2020թ. | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գործողությունների պլան կորոնավիրուսային վարակի հետ կապված վտանգի ռազմավարությունով | | | | | |
| 4. | Ժամանակին օպերատիվ տեղեկատվության փոխանակում բոլոր հնարավոր կապի միջոցներով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բժշկական կազմակերպությունների և համայքի բնակչության միջև և հանրային առողջապահական խորհրդատվությունների տարածում, պետական և հասարակական, գործընկեր, միջազգային և քաղաքացիական հասարակայնության կազմակերպությունների համագործակցություն | 1. Ապահովել օպերատիվ տեղեկատվության ժամանակին փոխանակումը բոլոր շահագրգիռ կողմերի միջև<br>2. Ապահովել հանգուցային ուղերձների արագ և ժամանակին տարածումը<br>3. Ապահովել սոցիալական ցանցերով, հեռուսատատեսությամբ, ռադիոյով բնակչության իրազեկումը | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի համայնքներ (համաձայնությամբ) | Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ | Մշտապես | |
| | **III. Դեպքերի վարում** | | | | | |
| 5. | Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական անձնակազմին մշտապես ապահովել թարմ տեղեկատվությամբ | Ապահովել լաբորատոր հետազոտությունների և կլինիկական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ | Չի պահանջվում | Մինչև 16.03.2020թ. | |
| | | Ուսուցանել բժշկական անձնակազմին | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մշտապես | |

## IV. Համաճարակաբանական դիտարկում

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Ներդնել դեպքերի ակտիվ հայտնաբերման մեխանիզմներ | Ներդնել կորոնավիրուսային հիվանդության դեպքի ստանդարտ բնորոշումները և համաճարակաբանական դիտարկման ուղեցույցները | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ<br>Արմավիրի մարզպետարան, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Մինչև 11.03.2020թ. | |
| | | Կրթել բուժանձնակազմին դեպքերի ստանդարտ բնորոշման ուղղությամբ | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ<br>Արմավիրի մարզպետարան, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մինչև 15.03.2020թ. | |
| | | Հասցեական և շտապ հաղորդման քարտերով ներկայացված անձանց նկատմամբ իրականացնել բժշկական հսկողություն | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիր մասնաճյուղ<br>Արմավիրի մարզպետարան, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | մշտապես | |
| 7. | Ուժեղացնել գործող համաճարակաբանական դիտարկման համակարգը (գրիպանման հիվանդություն, սուր շնչական վարակ և ծանր սուր շնչական վարակ) | Կրթել և/կամ վերապատրաստել ոչ վարակիչ հիվանդություններով զբաղվող բուժաշխատողներին | Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիր մասնաճյուղ | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մինչև 30.03.2020թ. | |
| | | Ծանր սուր շնչական վարակների դեպքերը հետազոտել նաև կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ՝ ելնելով ճամփորդական անամնեզից<br>Ապահովել համապատասխան | | | 01.03.2020թ. սկսած | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | լաբորատոր հետազոտությունների համար անհրաժեշտ ռեագենտներով և այլ պարագաներով | | | | |
| **V.** | **Դեպքերի համաճարակաբանական հետազոտություն և արագ արձագանքում** | | | | | |
| 8. | Արագ արձագանքման խմբերի անդամներին վերապատրաստել և ապահովել սարք-սարքավորումներով, անհատական պաշտպանության միջոցներով, տրանսպորտային միջոցներով | Վերանայել ԱԱԽ-ի կազմը և համալրել վարակաբաններով | Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ<br>Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Մինչև 11.03.2020թ. | |
| | | Ուսուցանել ԱԱԽ-ի անդամներին ապահովել սարք-սարքավորումներով, անհատական պաշտպանության միջոցներով, տրանսպորտային միջոցներով | | | | |
| 9. | Կոնտակտավորների մեկուսացման համար համապատասխան տարածքի հատկացում և կահավորում, սննդի և կենցաղային պայմանների ապահովում | Համապատասխան հյուրանոցի կամ հանգստյան տան ընտրություն | Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիր մասնաճյուղ<br>Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մինչև 11.03.2020թ. | |
| | | Կոնտակտավորների նկատմամբ հսկողության իրականացում, սննդի և կեցության հարցերի կազմակերպում | | | 01.03.2020թ.-ից սկսած | |
| **VI.** | **Վարակի հսկողություն** | | | | | |
| 10. | Ուժեղացնել վարակի հսկողության ծրագրերը, ակտիվացնել ՎՀ հանձնաժողովները, ապահել ազգային համակարգողի խորհրդատվությունները և աջակցությունը | Իրականացնել ինքնագնահատում ազգային մակարդակում | Առողջապահության նախարարություն<br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Չի պահանջվում | Մինչև 11.03.2020թ. | |
| | | Իրականացնել ինքնագնահատում բժշկական կազմակերպության մակարդակում | Առողջապահության նախարարություն<br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների | Չի պահանջվում | Մինչև 25.03.2020թ. | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | նախարարություն | | | |
| 11. | Բժշկական կազմակերպություններում իրականացնել վարակի հսկողության ռիսկերի գնահատում | Ապահովել անձնակազմի կրթումը | Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ | Չի պահանջվում | Մինչև 15.03.2020թ. | |
| | Որոշել հիվանդների մեծ հոսքերի ժամանակ վարակի հսկողության կարողությունները | Մշակել հիվանդների տեսակավորման, մեկուսացման և հոսքերի կառավարման ալգորիթմներ | Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներ, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արմավիր մասնաճյուղ | Չի պահանջվում | Մինչև 15.03.2020թ. | |
| | | Իրականացնել կադրերի պլանավորում/ վերապրոֆիլավորում | | Չի պահանջվում | Մինչև 30.03.2020թ. | |
| | | Ուսուցանել ոչ վարակիչ հիվանդություններով զբաղվող անձնակազմին | Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին | Չի պահանջվում | Մինչև 30.03.2020թ. | |
| 12. | Ուժեղացնել վարակի կանխարգելման միջոցառումները հասարակական վայրերում, պետական և մասնավոր կառույցներում, սննդի և մանկական կազմակերպություններում, ինչպես նաև տրանսպորտային միջոցներում | Ախտահանման միջոցառումների կազմակերպում և իրականացում | ՀՀ Արմավիրի մարզպետարան, Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներ, դպրոցների և նախադպրոցական կազմակերպությունների ղեկավարներ | Պետական բյուջե և օրենքով չարգելվող այլ միջոցներ | Մշտապես | |